ԱՇՈՒՂ ԹՈՐՈՍԵԱՆ

ԵՐԳԵՐ

«Մեռանի» հրատարակչություն

Թբիլիսի 1982

Աշուղ Թիֆիլու (Ծոս Մանուկյանի) երգերի ժողովածուն լույս է տեսնում նեղինակի մահից 60 տարի անց ու ընդգրկում է նրա ստեղծագործությունների միայն կեսը:

Թիֆիլին՝ մեծաճամբավ Ջիվանու ժամանակակիցն է, նրա երկրպագուն ու բարեկամը, տաղանդավոր Գուսան Հավասու ուսուցիչը:

Թիֆիլու գրական ժառանգության վերհանման անհրաժեշտ, բայց դժվարին գործը հաջողությամբ է պսակվել գրականագետ Դիմիկ Բագրատունու խրախուսելի ջանքերի շնորհիվ:

Կազմեց՝ Դ. Բագրատունին

2870-82

А 70103—39
М 604 (08)—82 133—82

С—Издательство «Мерани», 1982 г.

ԱՇՈՒՂ ԹԻՖԻԼՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

19-րդ դարի կեսերին ժողովրդական երգ ու նվագի հիմքի վրա Ջավախքի հայ ազգաբնակչության շրջանում զարգանում է աշուղական արվեստը։ 30—40-ական թվականներին այստեղ հայտնի էր հայ աշուղական պոեզիայի նշանավոր դեմքերից մեկը՝ Էրզրումից գաղթած Ղուկասիանոս Կարնեցին (1781-1841 թ. թ.), որը մեծ դեր է խաղացել հայ գուսանական արվեստի զարգացման գործում։

60—70-ական թվականներին ասպարեզ եկավ հայկական ազգային աշուղական նոր դպրոցի հիմնադիրներից մեկը՝ բանաստեղծ, երգիչ-երաժիշտ Ջիվանին, որը իր երգերով արտահայտեց հասարակական հնչողություն ունեցող խոր ու նուրբ գաղափարներ, մարդկային զգացմունքներ։ Ջիվանու ստեղծագործության հիմքում ընկած են հայ գրական լեզուն և ազգային ժողովրդական եղանակները։

Նույն ժամանակաշրջանում հանդես եկան աշուղներ Սիային, Թիֆիլին և ուրիշներ, որոնք երգում էին գյուղական հարսանիքների, խնջույքների, ժողովրդական տոնախմբությունների, ուխտագնացությունների ժամանակ։ Եթե Ջիվանու ստեղծագործություններն ու աշուղական տաղանդը գնահատվել և ուսումնասիրվել է ինչպես նախասովետական, այնպես էլ սովետական շրջանում, ապա, ցավոք բավարար չափով չի լուսաբանված Սիային, իսկ Թիֆիլին և մյուսները պարզապես մոռացության են մատնված։

Աշուղ Թիֆիլու գրական ժառանգությունը կորստից փրկելու, հրատարակելու և գնահատելու փորձեր կատարվել են վաղուց, սակայն որոշակի արդյունք չի ստացվել։ Եվ ահա այդ դժվարին ու պատասխանատու գործը իր վրա է վերցրել Ախալքալաքի նախկին մանկավարժական ուսումնարանի դիրեկտոր Վահագն Մկրտչյանը։ Նա, քաջատեղյակ լինելով Թիֆիլու գործունեությանը (նույնիսկ նրա կյանքի վերջին տարիներին ուղեկցել է շրջագայությունների ժամանակ), կարողացել է հավաքել ու գրի առնել նրա երգերը, դրանով իսկ իր երախտագիտության ու հարգանքի տուրքը մատուցել համագյուղացի աշուղին։

Թիֆիլին՝ Նդո Մանուկյանը, ծնվել է 1845 թվականին, Ախալքալաքի գավառի Սուլդա գյուղում, հողազուրկ գյուղացու ընտանիքում։ Վաղ հասակից պատանի Եղոն մեծ սեր է տածում աշուղական արվեստի նկատմամբ, սովորում է նվագել սազի վրա ու մեծ հետաքրքրությամբ մասնակցում է գյուղական օդաներում կազմակերպված աշուղական հանդեսներին։ Ինչպես Ջիվանին, Թիֆիլին ևս սովորել է ժամանակին մեծ համբավ վայելող, հեքիաթասաց ու երգասաց կարգախցի աշուղ Սիայու (Ղարա Ղազար) մոտ, Թիֆիլին ուսանել է արտակարգ ընդունակություններ, հաջողությամբ ուսանել է աշուղական արվեստը և հրաժեշտ տվել սիրելի վարպետին։ Սիային, ընդունված կարգի համաձայն, Եղոյին տրվել է Թիֆիլի (պատանի) անունը, օրհնել սազը ու բարի ճանապարհ մաղթել։

Առաջին շրջանում Թիֆիլին երգել է Սայաթ-Նովայի, Շիրինի, Սիայու, այնուհետև՝ Ջիվանու ու այլոց երգերը։ Սակայն երիտասարդ աշուղը դրանով չի բավարարվել, սեփական երգեր հորինելու փորձեր է կատարել և արժանացել ուշադրության։ Հետագա տարիներին աստիճանաբար կատարելագործվում է նրա արվեստը, ու համբավը տարածվում ոչ միայն իրենց գյուղում, այլև ողջ Ջավախքում։ Գաղթի տարիներին մեծ տառապանքներ կրած Թիֆիլին ստիպված թողնում է հայրենի գյուղը և բնակություն հաստատում Բաթումում, ուր և վախճանվում է 1923 թվականին, 78 տարեկան հասակում։

Նրա երգերի թեման սերն է, սոցիալական անարդարությունը, բարոյականությունը։

Լինելով հարսանիքի և ուրախության երգիչ, Աշուղ Թիֆիլին հորինել է կենսուրախ երգեր։ Հարսանյաց հանդեսների յուրաքանչյուր արարողությունը՝ նորահարսին հոր տանից դուրս բերելը, փեսացուին շորեր հագցնելը և այլն, գովերգել է համապատասխան հորինվածքով։ Թիֆիլուն են պատկանում «Թամադան», «Խնամի՛, օջախդ շեն է», «Ծկել եմ բարի տեսություն», «Ձեզ բարի լույս, բարեկամնե՛ր» և այս քնույթի ուրիշ շատ երգեր։

Թիֆիլին արձագանքել է իր ժամանակի անցուդարձին։ Համաժողովրդական նշանակություն ունեցող իրադարձությունները նրա աչքից չեն վրիպել։ Ընորոշ է առաջին իմպերիալիստական պատերազմի մասին գրած երգը։ Պատերազմի դաշտում գոհվում են աշուղի եղբայրը և աղջկա ամուսինը։ Մեղադրելով անգութ թագավորին՝ նա ասում է.

Սազս ուրախության էլ մի լար չունի,
Եղբայրս գոհվել է, շիրիմին քար չունի,
Աղջիկս ողբում է, որ էլ յար չունի,
Թագավորն անգութ է, խղճմտանք չունի։

Աշուղն ըմբոստանում է տիրող կարգերի դեմ։ Մի սյուժեից երևում է, որ Սուլդայի գյուղացիները անասունների համար չեն կարողացել կեր կուտակել և որոշել են հնձել Քոչոր աղայի լայնարձակ մարգագետինը։ Այդ հանդուգն քայլի համար նրանք պատժվում են։ Աշուղը պաշտպանում է գյուղացիներին, խարազանում թե՛ տիրող կարգերը և թե՛ աղային, ընդգծելով, որ Քոչորը «շոքել էր գյուղացու բկին...»

Աշուղ Թիֆիլու համարձակությունը ցայտուն կերպով երևում է սոցիալական մոտիվով գրած յուրաքանչյուր երգում։ «Գանգատ» բանաստեղծության մեջ բացահայտ կերպով մերկացնում է ցարական կարգերը՝ «Տարին թուր պարտքի տակ ես, թագավորի հարկի տակ ես»։ Նա զգում է մոտալուտ ազատության պահը և «հալալ համարում զնոր կրելը»։

Երբ 1917 թվականի դեկտեմբերին ռուս-թուրքական ճակատից ռուսական զորքերը նահանջում են, հեռատես աշուղը ևս կանխագուշակում է թուրքերի հարձակումը, ուստի նա աղերսանքով դիմում է ռուսական զորքին.

Ամա՛ն, ռուսնե՛ր, միք գնա,
Մի՛ք անտեր թողնի մեր հողը,
Սուլթան-էֆենդին մեզ կուտի,
Այդ խաղդախ, բալանչի գողը:

Եվ ահա սարսափելի գաղթը։ Երիտթուրքերի հայակոչ քաղաքականության հետևանքով 1918 թվականին Ախալքալաքի դավառի հայերը, թողած տուն ու տեղ, քայլում են մահաստիպուռ փոշեպատ ճանապարհներով, գիշերը քնում են բաց երկնքի տակ, հացի փոխարեն արմտիք ուտում, համաճարակը նոսրացնում է նրանց շարքերը։ Այս ամենին վկա աշուղը ողբում է.

Զար Սնոյրանը արնածարավ,
Ողջ հայերին է կոտորում,
Դու էլ հայ ես, աչքդ լավ բաց,
Քնել պետք չէ, շուտով վեր կաց:

Թիֆիլին խոր համակրանքով է վերաբերվել հայ առաջադեմ մտավորականներին։ Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի մասին երգեր է հորինել։ 1923 թվականին անձամբ ծանոթացել է Հ. Թումանյանի հետ, և նրա հետ ունեցած զրույցն ավարտելուց հետո, հանպատրաստից մի երգ է հյուսել, որտեղ երևում է, որ բանաստեղծը աշուղին հուսադրել է.

Հույսով ասավ՝ մի լոեցնի քո լարը,
Մեզ ազատություն է բերել էս դարը,
Պիտի ցնծա հայոց դաշտն ու սարը,
Պիտի ծաղկեն շոր անապատն ու քարը:

Լինելով Զիվանու ժամանակակիցն ու մտերիմը, Թիֆիլին, անշուշտ, խոր ազդեցություն է կրել նրանից։ Զիվանու նման նա ևս աշուղին տալիս է նույն կոչումն ու դերը.

Աշո՛ւղ, ժողովրդի համար խաղ ասա,
Միշտ գովերգիր, սրտանց երգ ու տաղ ասա,

Լավին խնդա, ցավին ախ ու վախ ասա,
Լացի ճետ լաց, հացին լի, ուրախ ասա:

Աշուղի երգերի տեքստերը հարազատորեն վերարտադրելու նպատակով բանահավաք Վ. Մկրտչյանը ունկնդրել է շատ կատարողների ինչպես Սուլդայում, այնպես էլ Ջավախքի մյուս գյուղերում։ Չնայած բանահավաքը ցուցաբերել է մեծ զգուշություն, բայց, երգերը մանրամասնորեն ուսումնասիրելիս, կարելի է նկատել, որ կատարողները և ինքը՝ բանահավաքը, մոռացված բառերի փոխարեն դրել են նորերը, որոնք այն ժամանակաշրջանում գործածական չէին ու չեն մերվում տվյալ ոտանավորի բառատեքստի հետ։

Ժամանակակիցների և բանահավաքի վկայությամբ Թիֆիլին իր երգերի եղանակները մեծմասամբ ինքն է հորինել, մի քանի երգեր կատարել է միևնույն եղանակով։ Դրանց տաղաչափական ձևերը, երաժշտական շեշտերը համապատասխանել են ընտրած եղանակին։ Նա օգտվել է նաև ուրիշ աշուղներին պատկանող երաժշտական մեղեդիներից։

Թիֆիլին շնորհալի աշուղ էր, նրա երգերը լավ են հանգավորված, բացի տողերի վերջնավանկերի ռիթմից, կա նաև ներքին ռիթմ ու համաչափություն, օրինակ.

Հայոց վշտի, հայոց երգի,
Հայոց վերքի համար ծնվա,
Հայոց բառի, հայոց տառի,
Հայոց քարի համար ծնվա:

Գրի առնված երգերի թիվը անցնում է 100-ից։ Թիֆիլյունն է վերագրվում նաև երկու երգախառն հեքիաթ։

Մյուս աշուղների նման Թիֆիլին ևս ունի թուրքերեն լեզվով հորինած երգեր, նա շատ հաճախ ելույթներ է ունեցել նաև թուրքական գյուղերում։

Հետազոտելով Գ. Թարվերդյանի կազմած «Հայ աշուղներ» (Երևան, 1937) ժողովածուում տպագրված «Խառնվեցավ . . .» երգը (էջ 10.), հակառակ գոյություն ունեցող որոշ կարծիքների, եկել ենք այն հետևության, որ դա պատ-

կանում է մեր հայրենակից աշուղ Թիֆիլուն։ Մեր ասածը չի կարող հերքել այն հանգամանքը, որ բանաստեղծության վերևում դրված է «Թիֆիլ-օղլի» ստորագրությունը. ըստ երևույթին դա ինչ-որ թյուրիմացություն է։ «Այնուամենայնիվ հնարավոր է, — գրում է Թարվերդյանը, — որ իմ հավաքած նյութերի մեջ սպրդած լինի և ինձ անհայտ, տպված երգեր» («Հայ աշուղներ» էջ 22)։

Չնայած Թիֆիլին լավ դիտեր աշուղական տաղաչափությունը, սակայն միշտ չէ որ հարազատ է մնացել դրան։ Աշուղի համար առաջնայինը ասելիքի բովանդակությունն էր և ոչ թե ասելաձևը։

Թիֆիլին իր երգերը հորինել է ժողովրդական խոսակցական լեզվով։ Կատարման ժամանակ վարպետորեն կարողացել է համադրել ասերգային և պարերգային տարրերը։ Նրա ստեղծագործությունը ընդգրկում է կենցաղագրական հարուստ նյութեր և ունի ճանաչողական որոշակի արժեք։

Թիֆիլին ավելի մեծ համբավ կարող էր ձեռք բերել, եթե նրա երգերը իր ժամանակին հրապարակվեին։ Աշուղի գործունեությամբ ոչ ոք չի հետաքրքրվել, ինքն էլ դրանից չի դժգոհել։

Մեր ժամանակի նշանավոր գուսան Հավասին մեծ հանակրանքով էր խոսում Թիֆիլու մասին, որին աշակերտել է մի քանի տարի։ Հավասու երգերը ուշադիր ընթերցելիս դրում ես Թիֆիլու շունչը։ Երախտապարտ Հավասին իր վարպետին ձոնել է մարդասիրական խոր զգացմունքով ոգեշնչված երգեր։

Թիֆիլին ունեցել է իր երգերի դավթարը։ Ափսո՜ս, որ ոչ մի կերպ չի հաջողվում գտնել այն։ Պետք է հուսալ, որ դավթարն ինչ-որ տեղում է պահվում և մի օր կհայտնվի ու դրանով հնարավոր կդառնա ամբողջացնելու աշուղ Թիֆիլու գրական ժառանգությունը։ Երկար որոնումներից հետո մեզ հաջողվեց գտնել աշուղի լուսանկարը, որը տպագրված է այս ժողովածուում։

ԴԻՄԻԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Ա Շ Ո Ի Ղ

Աշո՛ւղ, ժողովրդի համար խաղ ասա՛,
Միշտ գովերգիր, սրտանց երգ ու տաղ ասա՛,
Լավին խնդա, ցավին ա՛խ ու վա՛խ ասա՛,
Լացի հետ լաց, հացին լի, ուրախ ասա՛։

Ցանող-հնձողներին բարին կամեցիր,
Գնա արտվորի հետ բարեկամացիր,
Ժողովրդի չարն ու բարին իմացիր,
Նրա համար սրտի խոսք ու խաղ ասա։

Ուր ժողովուրդ չկա, սազը ո՞ւմ է պետք,
Խնդությունը, խաղը, տաղը ո՞ւմ է պետք,
Թիֆլիս, չորացած բաղը ո՞ւմ է պետք,
Անիմաստ երգչին միշտ ավա՛ղ ասա։

Ծ Ն Վ Ա

Հայոց վշտի, հայոց երգի,
Հայոց վերքի համար ծնվա,
Հայոց բառի, հայոց տառի,
Հայոց քարի համար ծնվա։

Հայոց հողի, հայոց ջրի,
Հայոց սարի համար ծնվա,

Սեր ու կարոտ, խինդ երգելու,
Ես իմ դարի համար ծնվա։

Սազը ձեռքիս մեկ խնդում է,
Մեկ հառաչում, տխուր երգում,
Մեկ ելնում է արեգակը,
Մեկ բուք ու հողմ, ձյուն է գալիս։

Իմ հայի պես հայ եմ ես էլ,
Վիշտ ու կարիք ցավ եմ տեսել,
Թիֆիլուս էլ մի վշտացնի,
Հազար կռիվ, դավ եմ տեսել։

ԻՆՔՍ՝ ԻՆՁ

Ամեն մարդ մի պաշտոն գտավ,
Դու սազի ծառա մնացիր,
Ուսդ առած՝ միշտ գյուղից-գյուղ,
Դունից-դուռ անցար, գնացիր։

Մի օր կուշտ, մի օր քաղցած,
Մի օր պատի տակ մնացիր,
Մի օր խնդացիր, բերկրացիր,
Մի օր ողբացիր ու լացիր։

Մեկը քեզ մի հաց կամեցավ,
Իր տաքուկ հարկի տակ առավ,
Մեկը լոկ անուշ խոսք ասավ՝
Անուշ լեզվով սիրտդ շահեց։

Ամեն մարդ մի պաշտոն գտավ,
Դու սազիդ ծառա մնացիր,
Թիֆիլի՛, կյանքիդ շատն անցավ,
Էլ հոգ չէ, քիչ էլ դիմացիր։

ԻՄ ՍԱԶԸ

Քեֆի համար է ստեղծված իմ սազը,
Երգ ու տաղի, խաղի համար է ստեղծված
իմ սազը,
Ողբ ու կոծի, լացի համար է ստեղծված
իմ սազը,
Իմ սիրելի խալխի համար է ստեղծված
իմ սազը։
Ես վարպետ եմ, ուզածիս պես ինքս եմ շինել
իմ սազը,
Միշտ տարել եմ նրա ցավը, նրա քնքշանքն
ու նազը,
Ուրախ հնչե, չպակասի ժողովրդիս մի մազը,
Երջանկություն, ուրախություն՝ այդ է խնդրում
իմ սազը։
Երբ պարում են, թռչկոտում է իմ սազը,
Երբ լալիս են, հեծկլտում է իմ սազը,
Երբ խնդում են, հրճվում է իմ սազը,
Թող անկատար չմնա սրտիս մուրազը։
Ցանկանում եմ, որ ոչ ես լամ, ոչ սազս,
Պաղատում եմ, որ կատարվի ուզածս,
Խաղաղություն լինի արար-աշխարհին,
Խաղաղություն ու կյանք երգի իմ սազը։
Թիֆիլին եմ՝ մեծ Սիայուն միշտ ծառա,
Նրա շնչով, նրա ոգով դաս առա,
Սազ սիրեցի, յարիս սիրուց ես վառա,
Սազս առած՝ հայոց աշուղ ես դառա։

ՀԱԶԱՐ ՄԱՂԻՑ ՀԱՑ ԵՄ ԿԵՐԵԼ

Իմ սազի հետ թափառել եմ,
Հազար մաղից հաց եմ կերել,

Մի օր ցորեն, մի օր գարի,
Մի օր էլ տապկած եմ կերել։

Հայի լավաշ, գյուրջու պուրի,
Թուրքի ատպայ, օսի՝ քյարզին,
Ռուսի կաշ, մյուսի մոտ խաշ,
Բաքվեցու շորեկն եմ կերել։

Ուր գնացի մեր կովկասցին՝
Միշտ դուռը բաց, սեղանին՝ հաց,
Իր սրտով շեն, իր հոգով լեն,
Ամեն տեղ հաց, կուշտ եմ կերել։

Լեզուներն են միայն տարբեր,
Քաշում տանում են վեր ու վեր,
Ասում են՝ Թիֆիլի՛ ախպեր,
Մենք բոլորս ենք աշուղասեր։

Ե Ր Ա Զ

Երազիս մեջ մորս տեսա,
Մանուկ էի գիրկն առավ,
Սիրով նայեց, ասավ, բալա՛,
Ինձ քեզանից ով տարավ։

Ասի, մայրի՛կ, փոքրիկ եմ դեռ,
Ինձ օրորիր, երգ ասա,
Ասավ՝ ավա՛ղ, ազի՛զ բալա,
Այս երազ է, որ տեսար։

Վերջին անգամ սիրով գրկեց,
Ջերմ գուրգուրեց ու լացեց,
Լուսաբացը խեղճ Թիֆիլուս
Լացող աչքերը բացեց։

Ջ Ա Վ Ա Խ Ք

Ջավախքը բարձր տեղ է,
Ջուր ունի կյանքի դեղ է,
Կաթն անարատ, յուղն առատ,
Աշխատավորն է հարազատ։

Յոթ տասնյակ գյուղ ունի,
Այգիներ շատ սուղ ունի,
Բնակիչը կարկուտից,
Երաշտից երկյուղ ունի։

Կովեր, խաշներ անհամար,
Բոնել են ողջ սարուդար,
Ջավախքում շատ-շատերն են
Ապրել ուղիղ երկու դար։

Խեղճ Թիֆիլին անբաժին,
Հույսը դրել է սազին,
Հոգի ու կյանք է տալիս՝
Իր Ջավախքի մի մազին։

ԱՐԻ, ՍԻՐԵԿԱՆ, ՈՐՏԵՂ ԵՍ

Սիրեկա՛ն, սիրո ծարավ եմ,
Սիրուհուդ ջուր տուր, որտե՞ղ ես,
Սիրտս հալ ու մաշ է եղել,
Սիրո կարոտ եմ, որտե՞ղ ես։

Օտարության մեջ ուշացար,
Ինձ պաշտամունքի աղբյուր
դարձար,
Մինակ ընկած եմ սարեսար,
Կաղաչեմ, արի, որտե՞ղ ես։

Քեզ համար կորած հավք դառա.
Քո սիրո կրակով վառա,
Յար կանչելուց չդադարա,
Արի՛, սիրեկան, որտե՞ղ ես։

Առանց յար կյանքը ինչ՞ կանեմ.
Հոգուս գանձերը ու՞մ տանեմ,
Քեզ իմ սրտից ես ո՞նց հանեմ,
Արի՛, Թիֆիլուդ, որտե՞ղ ես։

Ո Վ Փ Ե Ր Ի

Դեմքով սիրուն, տեսքով սիրուն, ո՛վ փերի,
Հասակդ նուրբ, դու անթերի, ո՛վ փերի,
Շատ ջահել ես հալել-մաշել, ո՛վ փերի,
Ես էլ դառա սիրուդ գերի, ո՛վ փերի։

Եկ, կաղաչեմ, հերիք կանչեմ, եկ, փերի՛,
Դու իմ սաղն ես, հոգուս մասն ես,
Երգիս խասն ես, եկ, փերի՛։

Լավ հասկացա, շատ սիրուն ես, գութ չունես,
Սիրտ մաշելուց, իմացիր օգուտ չունես,
Ինչ էլ անես, կասեմ իմ կյանքը դու ես,
Խելքի արի, եղիր բարի, ո՛վ փերի։

Եկ, կաղաչեմ, հերիք կանչեմ, եկ, փերի՛,
Դու իմ սաղն ես, հոգուս մասն ես,
Աշուղ դարձա, ձեռքիդ գերի, ով փերի՛։

Սեր ես դառել, սուր ես առել, ո՛վ փերի,
Սառն աղբյուրից ջուր ես առել, ով փերի,
Թիֆիլին էլ կուզե խմել, ծարավ է,
Կյանքս քոնն է, ինձ մի այրի, ո՛վ փերի։

Եկ, կաղաչեմ, հերիք կանչեմ, ո՛վ փերի՛,
Դու իմ սաղն ես, հոգուս մասն ես,
Երգիս խասն ես, ե՛կ, փերի՛։

ԽՆԱՄԻ, ՕՋԱԽԴ ՇԵՆ Է

Խնամի՛, օջախդ շեն է,
Սեղանիդ հաց, սիրտդ լեն է,
Աղջիկ ունես՝ լուսեղեն է,
Ասա, էլ ոնց գովերգեմ քեզ,
Ծաղիկ ունես սիրուն ու հեզ,
Ինչ բառերով գովերգեմ քեզ։

Խնամի՛, թասը բեր գինու,
Բաց արա, խասը բեր գինու,
Խմողաց անուշ քեֆ ասա,
Էն մեծ կարասից բեր գինու,
Մեր ծաղիկների կենացը,
Էն մեծ կարասից բեր գինու։

Հարս ու աղջիկների նազը,
Թող զնգա աշուղի սազը,
Ջպակսի ձեր գլխի մազը,
Սիրով կատարվի մուրազը,
Դե լից բաժակները գինի,
Խմողներին անուշ լինի։

Խնամի՛, օջախդ շեն է,
Սեղանիդ հաց, սիրտդ լեն է,

Աղջիկդ իրավ լուսեղեն է,
Թիֆիլին ոնց գովերգի քեզ,
Ծաղիկ ունես խոնարհ ու հեզ,
Ինչ բառերով գովերգեմ քեզ։

ՅԱՀ՚Ր, ՔԵԶՆԻՑ ՎԵՐՔ ԱՌԱ

Յա՛ր, քեզնից վերք առա, սերդ ինձ մաշեց,
Սրած կացին դարձավ, իմ ծառը տաշեց,
Այս տանջող, սուր ցավը տարիներ քաշեց.

Էլ հերիք է, խղճա, արի, ճար արա,
Քո կրակն ինձ հալեց, քո սիրուց վառա։

Յա՛ր, չարությունով չէ, չեն բուժի վերքը,
Խելքի արի, լսիր իմ սրտի երգը,
Խոնարհիր գլուխդ, տուր ինձ քո ձեռքը.

Էլ հերիք է, խղճա, արի ճար արա,
Քո կրակն ինձ հալեց, քո սիրուց վառա։

Աշուղին ով կտա մամոնա, ոսկի,
Նա միայն երգիչ է, վարպետ է խոսքի,
Թիֆիլուց չի զատվում քո տեսքը խսկի.

Էլ հերիք է, խղճա, արի ճար արա,
Քո կրակն ինձ հալեց, քո սիրուց վառա։

ԱՂԲՅՈՒՐԻՑ ՋՈՒՐ ՏԱՆՈՂ ԱՂՋԻԿ

Մեր անուշ աղբյուրից ջուր տանող աղջի՛կ,
Կանգնիր, ես իմ սպով քո տեսքը գովեմ,
Թուխ այտերդ, սև աչերդ, ծամերդ,
Էդ վարդագույն, ալվարդ երեսդ գովեմ։

Մեջքդ բարակ, ծոցդ նոներ են երկու,
Երկար վիզդ, փոքրիկ բերանդ գովեմ,
Լեզուդ մեղրածոր է, ծամերդ ջուխտակ,
Լուսնի պես լուսեղեն պատկերդ գովեմ։

Մեր անուշ աղբյուրից ջուր տանող աղջի՛կ,
Քո այդ թեթև, աշխույժ քայլվածքը գովեմ,
Դու աշուղ Թիֆիլուն խելքահան արիր,
Իմը պակաս, թող միշտ քո խելքը գովեմ։

ՃԱՄՓԻՆ ՏԵՍԱ

Յայլի ճամփին մի սիրունիկ հարս տեսա,
Մեջքին շարան-շարան շորս ծալ վարս տեսա,
Գլխին վարդ էր կապել, փուշին խաս տեսա,
Տեսքով առաքինի, մտքով պարզ տեսա։

Ասի՛, ո՞ւմ սիրունն ես, յարաբ ո՞ւմ յարն ես,
Որ ջահելի սերն է քաշել քեզ սարն էս,
Զլինի քո սիրով դու նրան այրես,
Մի հրեղեն փերի, մի թառլան [illegible]

2870-82

Ես մոտեցա, նա խոր նայեց աչքերիս,
Նոր շորերով զարդարվել էր իմ փերիս,
Ինձ էր փնտրում, կարոտել էր երգերիս,
Իմ անուշիկ յարին լուսեղեն տեսա։

ՀՐԱՇՔԻ ՊԵՍ ՀԱՅՏՆՎԵՑԱՎ

Հրաշքի պես հայտնվեցավ,
Տեղով հրաշք է իմ յարը,
Համեստությամբ լուսին դարձավ,
Դեմքով հրեշտակ իմ յարը։

Երբ աչքերն հառեց աչքերիս՝
Այրվեցի, հուր է յարս,
Երբ մի տաք համբույր շնորհեց,
Տեսա անուշ ջուր է յարս։

Երբ պարեց, սահելով անցավ,
Ասես զարնան բույր է յարս,
Քնքշություն, դեղեցկություն,
Միշտ հեղահամբույր է յարս։

Ոսկին, ոկը իմ ինչին է,
Ամեն բանից թանկ է յարս,
Թիֆիլուն սեր, երջանկություն,
Նա է արար աշխարհս։

ՊԱՐՏԵԶ ՄՏԱ

Ես իմ սիրուհու պարտեզը մտա,
Կարոտած սրտով սիրուհուս գտա,
Նա ինձ վարդ տվեց, ես նրան՝ շուշան,
Ասավ՝ մի մնա մենակ փերուշան։

Սիրտս ծարավ է, սիրածս՝ աղբյուր,
Ծարաված սիրտը միշտ փնտրում է ջուր,
Կյանքում էլ ինչ սեր, թե չկա համբույր,
Սերն անմարելի ատրուշան է, հուր։

Աշուղ Թիֆիլին իր սագին գերի,
Չի գտնում վերջը սիրո երգերի,
Թե կյանքում խնդա ու բախտը բերի,
Սերն սպեղանի կլինի վերքերի։

ՅԱՐՍ ՄՈՏԵՍ ԱՆՑԱՎ

Յարս մոտես անցավ, խռով էր, լուռ էր,
Դեմքը թախծոտ, խիստ մտածկոտ, տխուր էր,
Իմ նրան նայելը, կանչելը զուր էր.

Մոլորված նայեցի, սիրտս շահեցի,
Յարիս խռով տեսքը սեր համարեցի։

Յարս վարդ էր փնջել, պարտեզը բաց էր,
Մոլոր էր, հուզված էր, դեմքը քրտնած էր,
Ասես աշխատել էր, հոգնած, հարբած էր.

Մոլորված նայեցի, սիրտս շահեցի,
Յարիս վարդ փնջելը խաղ համարեցի։

Վերջն իմացա, ամա՛ն, յարիս վիշտն էր խոր,
Առանց նրան էլ ինչ արև, էլ ինչ օր,
Ծնողներն ընտրել էին փեսացու մի նոր.
Մոլորված նայեցի, վիշտս պահեցի,
Յարիս լքված սերը ցավ համարեցի։

Սիրահա՛ր, քո վարդն է հարուստի բաղում,
Ոսկեպաշտ ագռավն է նրա հետ խաղում,
Իգո՛ւր խեղճ Թիֆիլի՛, քեզ էլ չեն թաղում.
Մոլորված նայեցի, լացով նայեցի,
Յարից բաժանվելը մահ համարեցի։

ՀԱՆԴԵՍ Է ԲԱՑՎՈՒՄ

Դավակա՛ն խնամիք, աննմա՛ն հյուրեր,
Անդի՛ն բարեկամներ, հանդեսն է բացվում։
Ուրի՛ գլեր, ուրախացեք, խնդացեք,
Ախորժակը անուշ գինով է բացվում։

Առաջին բաժակը՝ զույգի կենացը,
Ցնծացեք, պարեցեք, «շաբաշ» կանչեցեք,
Միշտ անսպառ լինեն խմիչքն ու հացը,
Իրար շատ հարգեցեք ու «ջան» կանչեցեք։

Ջան ասողը քեֆում երբեք չի հարբել,
Չի լացել դառն օղուց, չի խախտել կարգը,
Զգուշացել, իրեն պահել է պարկեշտ,
Ինչպես պահանջում է մեր հայոց բարքը։

Շատ խմողը, իմացե՛ր, միշտ շատ է խոսում,
Կորցնում է իրեն ու վատ է խոսում,
Անպատեհ բաներ են բերանից հոսում,
Թիֆիլին իր խալխին ճիշտ խոսք է ասում։

ՊԱՐԵՐԳ

Քողն երեսին, շողն երեսին,
Շաղն երեսին վարդն եկավ,
Օրոր, շորոր, հեզ ու նազով՝
Սրտիս սիրած յարն եկավ.

Հեզ ու նազով, իմ մուրազով՝
Սրտիս սիրած յարն եկավ։

Բաղով եկավ, խաղով եկավ,
Տաղով եկավ սիրունս,
Շախով եկավ, ժայտուն եկավ՝
Իմ արևը, գարունս.

Խնդուն եկավ, բաղով եկավ՝
Իմ արևը, գարունս։

Սարեն եկավ, կալեն եկավ,
Արտեն եկավ իմ սերը,
Պաղ ջրերի զովեն եկավ,
Հովեն եկավ իմ սերը.

Զովեն եկավ, հովեն եկավ,
Ծովեն եկավ իմ սերը։

Շատ աշխույժ է, շատ թեթև է
Մեր Թիֆիլու այս պարը,
Թող նա սիրած սազը գովի,
Ես՝ անթառամ իմ յարը.

Սազը գովի, մասը գովի,
Ես՝ անթառամ իմ յարը։

ՀԻՍՆԻ*

Հիսնի, եկ քեզ սպով գովեմ,
Խաս հագիդ ատլասով գովեմ,
Գիտես, որ ես երգի ծով եմ,
Քո շենք ու շնորհքը գովեմ։

Կանանց մեջ գովական կին ես,
Ինձ համար կյանք ես, անգին ես,
Մտքով նոր ես, դեմքով հին ես,
Քո պատիվ, հարգանքը գովեմ։

Բախտավոր եմ՝ մարդասեր ես,
Ինձ չես անի դու սևերես,
Աղնիվ վարքով սիրտս գերես,
Քո հացն ու համբավը գովեմ։

Շենացրել ես իմ օջախը,
Ծաղկեցրել պարտեզն ու բաղը,
Լսիր քո Թիֆիլու խաղը՝
Նստել վերկենալդ գովեմ։

*(Հիսնին աշուղի կինն է, որը հիշատակվում է նաև այլ երգերում)

ԷՍ ԳԻՇԵՐ

Էս գիշեր խնդության գիշեր,
Ծարավիս ջուր բերեց յարս,
Էս գիշեր հարսանյաց գիշեր,
Ինձ հարս դառավ սիրուն յարս։

Երբ բացի քողն երեսի,
Արևից պայծառ էր յարս,
Արևն էր ասես դուրս եկել,
Միշտ լուսաշող էր էս գիշեր։

Թիֆիլի՛, կյանքդ թող խնդա,
Քեզ փառք է եկել էս գիշեր,
Քո երազների աղջիկն է
Քեզ համբույր բերել էս գիշեր։

ԿՆՔԱՄԱՅՐԸ

Ալ է հագել, ալ այտերով,
Կարմիր վարդ է կնքամայրը,
Տեսեք ոնց է հարսին զուգել,
Ինքն էլ մի հարս՝ կնքամայրը։

Քայլում է ոնց թեթև կաքավ,
Խնդություն է կնքամայրը,
Ծաղկի բուրմունք է տարածում,
Օծում է իր անցած վայրը։

Սանահորը ողջույն տալիս՝
Խոնարհվում է կնքամայրը,
Քեզ նման տասը ծներ՝
Քո աննման անուշ մայրը։

Ասեք, Թիֆիլին ոնց գովի,
Գովական է կնքամայրը,
Հպարտացած ջան է կանչում
Ու քեֆ քաշում կնքամայրը։

ՅԱՐ ԱՆՈՒՇԻԿ ...

Յա՜ր անուշիկ, յա՜ր սիրունիկ,
Յա՜ր գովական, յա՜ր,
Սիրո ծաղիկ, վարդի շաղիկ,
Յա՜ր նազելի, յա՜ր։

Շուտով արի, սրտով արի,
Սիրով արի, յա՜ր,
Իմ նվիրած վարդով արի,
Զարդով արի, յա՜ր։

Քո վառ սիրուց ես դարձել եմ
Սիրո ծարավ, յա՜ր,
Զքնաղ տեսքդ խելքս տարավ,
Սիրտս վառավ, յա՜ր։

Յա՜ր անուշիկ, յա՜ր սիրունիկ,
Յա՜ր գովական, յա՜ր,
Քո Թիֆիլուն միշտ դեղ ու ճար,
Մի ուշանա, յա՜ր։

ՍԻՐՈ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղջի՜, կարմիր լալան բացել է թերթը,
Արի ելնենք էրթանք Սուլդայի բերդը,
Էն Ծակ քարի տակով սրտանց անցկենանք,
Աղնիվ խոսք տանք իրար ու սիրով մնանք։

Ասա՜, ի՞նչ ենք անում տերտեր կամ վկա,
Երբ որ մեզնից բարձր բնությունը կա,

Մենք թող սիրենք իրար ու սիրով մնանք,
Մեր սիրո գաղտնիքը հոգով իմանանք։

Հայրդ հակառակ է՝ կտանեմ բեզ սար,
Մեզ պաշտպան դուրս կգա աշխարհը արար,
Տառապանք էլ եթե կրենք միասին,
Վատ խոսք դու չես լսի մեր սիրո մասին։

Քո Թիֆիլին չունի կրթություն, ուսում,
Բայց սազի տեր մարդը դուկ խոսք է ասում,
Արի՛, արի՛, ի՞նչ ես մենակ ման գալիս,
Ուր գնանք աշուղին հարգանք են տալիս։

ԳԵՂԵՑԻԿ Է ՇՈՂՆ ԱՐԵՎԻ

Գեղեցիկ է շողն արևի,
Շաղն արտերի գեղեցիկ է,
Բայց իմ յարի վառ ժպիտը՝
Շող ու շաղից գեղեցիկ է։

Բուրմունքով է կարմիր վարդը,
Մաղիկների գեղեցիկն է,
Իսկ իմ յարը վարդից բուրող՝
Վարդից կարմիր գեղեցիկ է։

Շատ աղջիկներ եմ ես տեսել,
Շատ ժպիտներ քնքշանքով լի,
Սակայն յարիս նիստուկացը՝
Այն բոլորից գեղեցիկ է։

Գեղեցիկ է շողն արևի,
Շաղն արտերի գեղեցիկ է,
Բայց Թիֆիլու սիրած յարը
Ամեն բանից գեղեցիկ է։

ԳԱՂՏՆԻՔ ՉՈՒՆԵՄ

Սազիս լարը սրտիս լարն է,
Սազից անգին բան չունեմ, յա՛ր,
Սազիցս շատ քեզ սիրեցի,
Դարձա թամամ մի սիրահար։

Սազիս ձայնը մտքիս ձայնն է,
Որ կանչում է միշտ՝ արի՛, յա՛ր,
Սազիս լեզուն իմ լեզուն է,
Քեզ հետ սազով եմ սիրահար։

Գաղտնիք չունեմ ես իմ սազից,
Կյանքում միակ ընկերս է, յա՛ր,
Նրա հետ միշտ թափառել եմ՝
Երկրից-երկիր ու սարե-սար։

Քո Թիֆիլին առանց սազի,
Առանց յարի չի դիմանա,
Սազով երգեմ սրտիս սերը,
Թող արար աշխարհ իմանա։

ՀԱՐՍԱՆԻՔԻՑ

Հարսի մայրը լաց է լինում
Փեսի մայրը՝ պար գալիս,
Հարսի հայրը վշտանում է,
Փեսի հայրը՝ ծափ տալիս։

Մեկն արցունքոտ, մյուսն ուրախ,
Մեկը խնդուն, մյուսը՝ ախ,

Ջեմ հասկանում, թե ով շահեց,
Հանելուկ է այսօր, ավա՜ղ։

Թիֆիլին միշտ վկա դրան՝
Նվագել ու տաղ է ասել,
Բարին մաղթել ծաղիկներին,
Երկուսին էլ լավն է ասել։

ԴՈՒՔ ՄՆԱՔ ԲԱՐՈՎ

(Աղջկա երգը)

Իմ անգի՜ն ծնողնե՛ր, քույրե՛ր, եղբայրնե՛ր,
Բաժանվում եմ այսօր, դուք մնա՛ք բարով,
Հարս եք ճամփում արդեն հարազատին ձեր,
Հարազատն է զատվում, դուք մնա՛ք բարով։

Արդեն բոլորել է իմ օրն ու տարին,
Սիրով համբուրեցե՛ք ինձ ու իմ յարին,
Օրհնեցե՛ք, ցանկացե՛ք մեզ լավն ու բարին,
Աննման ծնողներ, դուք մնա՛ք բարով։

Մայրիկ ջա՜ն, քո անուշ կաթով եմ սնվել,
Կաթդ հալալ արա, դու մնա՛ս բարով,
Հայրիկ ջա՜ն, քո փայլուն աստղով եմ ծնվել,
Աստղը թող շողշողա, դու մնա՛ս բարով։

Հայրական տուն, հարազատ տուն, օթևան,
Հեռանում եմ քեզնից, դու մնա՛ս բարով,
Այցի կուգամ հարազատնե՛ր, ընկերնե՛ր,
Ծանոթ հարևաննե՛ր, դուք մնա՛ք բարով։

Թիֆիլին հորինեց մեզ համար խաղը,
Ծաղկել են սարերը, ծաղկել է բաղը,
Անշուշտ, մեր նոր տան մեջ կլինեմ վաղը,
Ինձ բարի՛ կամեցեք, դուք մնա՛ք բարով։

ԹՈՂ ԵՍ ԿԱՐՈՏՈՎ ՄՆԱՄ

(Մոր երգը)

Իմ աննման սիրու՛ն, քեզ հալա՛լ կաթս,
Կեսրանց տանից միշտ լավ անունդ իմանամ,
Մեծերի պատիվը գլխից վեր պահիր,
Նրանք սիրեն, թող ես կարոտով մնամ։

Համեստ, խաղաղ եղիր, դեմքով միշտ պայծառ,
Բոլորն ասեն հալալ կաթկեր ես, բալա,
Քո վարքով բարձրացրու մեր տան պատիվը,
Նրանք պաշտեն, թող ես կարոտով մնամ։

Այս երգն էլ Թիֆիլին գրեց ինձ համար,
Իմ աննմա՛ն աղջիկ, իմ արև անմար,
Միշտ անթառամ մնա՝ ձմեռ, թե ամառ,
Նրանց բույր տուր, թող ես կարոտով մնամ։

ԿԱՐՈՏԵԼ ԵՄ

Սիրուններից սիրուն, հե՞յ, յա՛ր,
Զքնաղ տեսքիդ կարոտել եմ,
Արի, երգով հերիք կանչեմ,
Բոյ ու բուսիդ կարոտել եմ,
Այ երեսիդ կարոտել եմ։
Շատ ման եկա քաղաք ու գյուղ,
Չտեսա քեզ նման շքեղ,
Դու ես աշուղիս ճար ու դեղ,
Ես քո տեսքին կարոտել եմ,
Թուխ ծամերիդ կարոտել եմ։
Հիսնի՛, Թիֆիլուն կին դառար,

Թափառ երգչի երգից վառար,
Սիրեցիր, երբեք չսառար,
Ախ, քո հացին կարոտել եմ,
Խինդ ու լացիդ կարոտել եմ։

ՅԱՅԼԻ ՍԱՐԵՆ ԿՈՒԳԱՐ

Ալ էր կապել սիրած յարս,
Մեր յայլի սարեն կուգար,
Դեմքին ժպիտ, սիրտն հրավառ,
Ծաղկած սար ու քարեն կուգար։

Ջուլալ ու սառն աղբյուրներից
Ջուր էր խմել, չէր հովացել,
Անուշ յարի կարոտն ուներ,
Սերն էր նրա սրտում ծովացել։

Քայլում էր ոնց պարող կաքավ,
Սրտում չուներ ո՛չ վիշտ, ո՛չ ցավ,
Մենակ յարի տեսքին կարոտ՝
Անուշ համբույր տալու կուգար։

Կարմիր այտերն արած լալա,
Սև աչքերը ցոլացող սաթ,
Փոքրիկ բերան, բարի ժպիտ,
Լայն ճակատը՝ սպիտակ կաթ։

Յարս յայլի սարեն կուգար,
Ծաղկած սար ու քարեն կուգար,
Թիֆիլուն կյանք ու խինդ տալու,
Վարդերի պարտեզեն կուգար։

ՄԵՐ ԶՈՒԼԱԼ ԱՂԲՅՈՒՐԻ ՋՈՒՐԸ

Մեր զուլալ աղբյուրի ջուրը,
Ձեմ մոռանա քո համբույրը,
Դու ես իմ սրտի վառ հուրը.

Օրո՜ր, շորո՜ր, նազով արի՛,
Աղջի՛ ջան, իմ սազով արի՛,
Քո սրտի մուրազով արի՛։

Կանգնել ես իլիկ կմանես,
Բրդից բարակ թել կհանես,
Աշուղի խելքը կտանես.

Օրո՜ր, շորո՜ր, նազով արի՛,
Աղջի՛ ջան, իմ սազով արի՛,
Քո սրտի մուրազով արի՛։

Սիրած յարդ չի դիմանա,
Հայտնիր, թող մերդ իմանա,
Քեզ եմ կանչում, եկ, մի մնա.

Օրո՜ր, շորո՜ր, նազով արի՛,
Քո Թիֆիլու սազով արի՛,
Մեր սրտի մուրազով արի՛։

ԳՈՎՔ ՍԻՐՈՒՀՈՒՍ

Արտ եմ ցանում, հաց ես բերում,
Բանջարը տապակած ես բերում,
Ուսիս ուսընկեր ես, յար ջա՜ն,
Կժով սառը ջուր ես բերում։

Ոչ քուն ունես և ոչ դադար,
Գործդ չես թողնում կիսկատար,
Մանում ես, գործում ես, կարում,
Գոմում խնոցի ես հարում։

Թոնիր վառում՝ հաց ես անում,
Փոքրը լա՝ կուրծքդ բաց ես անում,
Թե օֆ արավ մեկնումեկը,
Մով աչերդ թաց ես անում։

Դժվար է ճարել քեզ պես կին,
Խելացի, գործունյա, անգին,
Թիֆիլին դեռ քիչը ասավ,
Օջախի պատիվն ես մեր հին։

ԵՐԱՆԻ ԵՐԱԶԻՍ ԳԱՅԻՐ

Երանի երազիս գայիր,
Ինձ քո ձեռքով մի ջուր տայիր,
Նստեիր, մոտս մնայիր,
Երանի երազիս գայիր,
Ինձ քո ձեռքով մի ջուր տայիր։

Երանի թեքվեիր կամաց,
Տեսնեի թուխ երեսդ բաց,
Սեղմեիր գլուխդ սրտիս,
Ա՜խ, երանի, երազիս գայիր,
Ինձ քո ձեռքով մի ջուր տայիր։

Երանի, ախ, շատ երանի,
Անուշ լեզուն քո բերանի,
Թիֆիլուն սիրո խոստում տար,
Գոնե որպես մի երազ գար
Ու ինձ սիրո անուշ ջուր տար։

ԱՐԱՔՍՅԱՅԻՆ

Աղջի՛, անունդ հին է,
Ասեմ, իրոք, անգին է,
Էդ քո ջրից մի պուտ տուր,
Կյանքում մեռնել կա, մին է։

Գիտես, ծնվել ենք հողից,
Ոչ թե Ադամի կողից,
Ինձ յար ասես, ես էլ՝ քեզ,
Սիրտս զարկում է դողից։

Մեր սարերում ջուրն է շատ,
Վառ ծաղկունքի բույրն է շատ,
Համբույրիդ հետ թույն էլ տաս.
Երբեք չեմ ասի քեզ վատ։

Մեր այս չքնաղ լեռներում՝
Թիֆիլիս քեզ սիրեցի,
Որպես սիրո նշավակ՝
Այս երգս նվիրեցի։

ՄԻ ԽԱՌՆԻ

Կեղծ խոսքերով սեր չի լինի,
Սիրուդ դառնություն մի խառնի,
Խմածդ անուշ կաթի հետ՝
Թթու թրթնջուկ մի խառնի։

Լավ ծաղիկը վարդի թփից,
Լավ աղջիկը մորից ընտիր,

Այգում աճած ազնիվ ծառը՝
Շամպուդի քոլին մի խառնի։

Հոգով սիրունն է սիրունը,
Դեմքի գույներին մի խաբվի,
Շնորհալի բանիմացը՝
Ապաշնորհին մի խառնի։

Թիֆիլին խրատ է կարդում,
Ինքն ուրիշի խելքին կարոտ,
Եկ հասկացիր լավն ու վատը,
Մարդը՝ նամարդին մի խառնի։

Թ Ա Մ Ա Դ Ա

Անուշ կերուխումը, ուրախ հանդեսը
Սաղկեցնող, զարդարող զարդն ես, թամադա՛,
Գինու գավը ձեռիդ, գործիդ հաստատուն,
Դու ընդունակ, ընտիր մարդ ես թամադա՛։

Կենացներ ես ասում խրատող խոսքով,
Ազնիվ միտքը, բնավ, չեն չափի ոսկով,
Թե Երևան գնանք, Թիֆլիս, թե Մոսկով,
Խնջույքն անիմաստ է առանց թամադա։

Թեկուզ որքան մարդ էլ նստի սեղանին,
Աղբյուրի պես հոսի հին կարմիր գինին,
Հարբեն, իրար կանցնեն տղամարդ ու կին,
Թե չլինես դու, բարիմաստ թամադա՛։

Դու աշուղի հոգու հալալ ընկերն ես,
Սեղանին բոլորածներից բոլորից վերն ես,

Քո կարգ ու կանոնով հանդեսի տերն ես,
Երգասեր, բանիմաց, ազնիվ թամադա՛։

Քեզ ընտրել են խելքիդ ու վարքիդ համար,
Քեֆեր ես անցկացրել անթիվ, անհամար,
Դու միշտ մեծ ախպեր ես Թիֆիլուս համար,
Թասդ անուշ արա, անուշ թամադա՛։

ԴԱՐՆ ԱՆՑԱՎ

Դարն անցավ, ծերացավ անցավ,
Հային մի լավ բան չթողեց,
Դարն անցավ, դավերով անցավ,
Մի շեն հուշարձան չթողեց։

Ավերվեց անթիվ օթևան,
Վաթանը մնաց որբացած,
Դարն անցավ, ցավերով անցավ,
Շենացած հայ գյուղ չթողեց։

Հույս ունենք վաղվա օրվանից,
Հույսն է ապավենը հայի,
Լույս կուզենք վաղվա օրվանից,
Շատ տոկալը սիրտ չթողեց։

Ողբում է սազը Թիֆիլու,
Հեկեկանք է գալիս խորքից,
Դարն անցավ, արցունքով անցավ,
Հային Հայաստան չթողեց։

(1899 թ. դեկտեմբերի 31-ին)

ԱՎԵՏԻՍ ԵՐԳԵԼՈՎ ԱՆՑԱՆ

Ավետիս երգելով անցան,
Բայց մի ավետիս չտեսա,
Հին մեռելները կենդանացան,
Հային հարութիւն չտեսա։

Ինչ երգ լսում ես՝ ողբ ու կոծ,
Գաղթ, ավերում, թալան ու սով,
Լացն ու արցունքն են դառնում ծով.
Ա՜խ, մի ուրախ օր չտեսա։

Հոգնած զարկում եմ լարերին,
Նայում եմ մեր որբ սարերին,
Ավերակներին, քարերին,
Լուսաշող մի պահ չտեսա։

Թիֆիլի՛, ասում են կգա,
Համբերիր, հայի պես տոկա,
Շատ անգամ ալ շապիկ հագա,
Վա՜խ, ազգիս լավը չտեսա։

ՏՐՏՈՒՆՋ

Ջուրը եկավ, մաշեց գնաց,
Սար ու ձոր տաշեց, գնաց,
Աշխարհիս պատուհանեն
Եկողը աշեց, գնաց։

Հեղեղը տարավ արտս,
Կորցրի անգին վարդս,

Լճերն էլ թանաք դառան՝
Ձեն սպառի ծով դարդս։

Աշունը հողմն է ծեծում,
Ձմեռը՝ բուքը դաժան,
Թիֆիլի՛, մարդն արարած՝
Հոգսից ու ցավից անբաժան։

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՐԱՏ

Մայրս խրատում էր՝ որդի մունջ մնա,
Համեստ եղիր ու չար ճամփով մի գնա,
Բարի գործի համար քեզ մեծացրի,
Բարիք արա, ծուռ ճամփով մի գնա։

Հայրս մաճն էր գովում, իր վար ու ցանը,
Գարի հացը, անժուր ապուրն ու թանը,
Կասեր՝ հարամ ուտողի վատ է բանը,
Բարիք արա, ծուռ ճամփով մի գնա։

Ծնողացս խրատները լսեցի,
Թիֆիլին եմ, կյանքում գործեցի բարի,
Արդար բան չտեսա ես ոչ մի տարի,
Ուր գնացի՝ ոտս դեմ առավ քարի...

ՍՈՒԼԴԱՅԻ ՈՂԲԸ

(1888 թվական)

Քոչոր աղան տիրել էր գյուղի հողը,
Բոլորիս բռնել էր սարսափն ու դողը,
Գյուղացու գրպանից կորել էր փողը,
Ես ահով եմ գրում այս երկու տողը։

Գյուղի տակ տարածված մեծ մարգագետին,
Խոտն ելել, հասել, թեքվել էր գետին,
Ով իմանար աղի մտքերը ետին,
Ժողովուրդը ելավ՝ քաշեց գերանդին։

Քոչոր աղան լսեց, բերեց դատավոր,
Բերեց ժանդարմներ, սուր-թուր ահավոր,
Ասավ՝ իմ թիկունքն է, օրենք, թագավոր,
Պիտի տուժի Սուլդան որպես հանցավոր։

Տեղն ու տեղը վճռվեց, որ գյուղացին
Պիտի կարոտ մնա վաստակած հացին,
Ելան՝ ծունկի իջան, բոլորը լացին,
Բայց Քոչոր աղի սիրտը չփափկեցրին։

Երեք հազար հարյուր մանեթ էր հարկը,
Թե ոնց ոխսկ արած խախտում եք կարգը,
Ինչ է, «չալով ծածկա՞ծ» տեսաք աշխարհը,
Այսպես կատարվեցավ Քոչորի բարքը։

Քոչոր աղեն հանեց գյուղացու կաշին,
Երանի թե սատկեր, թքեինք լեշին,
Այսպես պիտի գրեմ օջախիս դաշին,
Որ թոռից-թոռ հիշեն հարկը Քոչորի։

Ով որ չուներ՝ հավաքեցին, բանտ դրին,
Մարեցին ու հանգան շատ օջախներ հին,
Որբ, անտեր մնացին երեխա, թե կին,
Այսպիսի ողբ աչքով տեսավ Թիֆիլին։

ԱՄԱ՞Ն, ՌՈՒՍՆԵ՛Ր, ՄԻ՛Ք ԳՆԱ

Ամա՞ն, ռուսնե՛ր, մի՛ք գնա,
Անտեր մի՛ք թողնի մեր հողը,
Սուլթան-էֆենդին մեզ կուտի,
Այդ խարդախ-թալանչի գողը։

Ամա՞ն, ռուսնե՛ր, մի՛ք գնա,
Մի՛ք կտրի մեր հալալ հացը,
Գթացեք խեղճ ժողովրդիս,
Լսեք նրա ողբն ու լացը։

Օգնեցե՛ք, ինչպես օգնել եք,
Զորացրեք աչքերիս թացը,
Ամա՞ն, ռուսնե՛ր, մի՛ք գնա,
Թիֆիլին էլ որբ կմնա։

ՍՈՒԼԴԱՅԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Համբարենց Վահրադի յուզբաշի վախտը՝
Կտրվեց գյուղացու վաստակը, բախտը,
Կաշի էր հանում նրա սև լախտը,
Ողբալի էր դրությունը Սուլդայի։

Տարին տասն անգամ հարկ հավաքեցին,
Ակնիվ ժողովրդի հոգին հանեցին,
Սուրբ արդարությունը հեռու վանեցին,
Ցավալի էր դրությունը Սուլդայի։

Քոչոր աղեն չոքեց գյուղացու բկին,
Պարտքի տակ լաց եղան երեխա, թե կին,

Տներից դուրս քաշեց թ՛ե նորը, թ՛ե հին,
Սոսկալի էր դրությունը Սուլդայի։

Գյուղն իրոք որբացավ, մի աքլոր խոսեց,
Գետակն էլ ցամաքեց, էլ ջուր չհոսեց,
Թիֆիլի՛, ծով վշտից դեմքդ ակոսվեց,
Տանելի չէր դրությունը Սուլդայի։

1914 ԹՎԻՆ

Հազար ինն հարյուր տասնչորս թվին
Դավ ու սարսափ պատեց արար աշխարհին,
Ոտքի ելան պետություններ նոր, թե հին,
Ողբացին ծերերը, լացին մայր ու կին։

Մարդկանց արյունն ելավ, հոսեց, գետ դառավ,
Կռիվներում քանի՞ քաղար, գյուղ վառավ,
Զմռան ցրտին ինչքա՜ն ոտ ու ձեռք սառավ,
Քանի՞ օջախ, քանի՞ վառ արև մարավ։

Սազս ուրախության էլ մի լար չունի,
Եղբայրս զոհվել է, շիրիմին քար չունի,
Աղջիկս ողբում է, որ էլ յար չունի,
Թագավորն անգութ է, խղճի խայթ չունի։

Թնդանոթի արկը բանդեց մեր տունը,
Գաղթականներ դարձանք, կորավ իմ քունը,
Անգամ խեղճ թռչունը կորցրեց յուր բույնը,
Ծով ու ցամաք բռնեց մարդկանց արյունը։

ԱՐԴՅՈՔ Ո՞Վ Է, ԽԵ՜ՂՃ ԳՅՈՒՂԱՑԻ, ՔՈ ՏԵՐԸ

Կարկուտն եկավ, սրբեց տարավ արտերը,
Բաղմապատկեց մարդկանց ցավը, դարդերը,
Թառամեցին պարտեզների վարդերը,
Արդյոք ո՞վ է, խե՜ղճ գյուղացի, քո տերը։

Աղքատացած հող ու տունը ծախեցին,
Ուսերից պանդուխտի պարկ կախեցին,
Հարուստները հողը առան, դաղեցին,
Արդյոք ո՞վ է, խեղճ գյուղացի, քո տերը։

Թիֆիլին ո՞ւր գնա, ո՞ւմ համար երգի,
Ցավերն անհամար են, սրտում խոր վերք է,
Արտերն հեղեղվել են, գյուղն առանց բերք է,
Արդյոք ո՞վ է, անբա՜խտ երգիչ, քո տերը։

ՆՈՐԻՑ ՁՅՈՒՆԸ ՀԱԼՎԵՑ

Նորից ձյունը հալվեց, դաշտերն արթնացան,
Սար ու ձոր ցնծացին, ծաղկունքն արթնացան,
Հեռու երկրներից հավքերը դարձան.

Դու ո՞ւր ես, ա՜խ ո՞ւր ես,
Իմ պանդո՛ւխտ ախպեր,
Ես քեզնով եմ ծարավ,
Արի ինձ ջուր բեր։

Հայրս կարոտ գնաց նկարդ ծոցում,
Մայրս հալվեց, մաշվեց կարոտիդ բոցում,
Ես էլ չեմ դիմանա այս վառ հնոցում.

Դու ո՞ւր ես, ա՜խ, ո՜ւր ես,
Իմ պանդու՛խտ ախպեր,
Ես քեզնով ծարավ եմ,
Արի ինձ ջուր բեր։

Թիֆիլին սաղն առած քեզ շատ է փնտրել,
Հանդիպման ջերմ սիրո երգեր է ընտրել,
Ջոքել, աղերսել է, աստված է խնդրել.

Դու ո՞ւր ես, ա՜խ, ո՜ւր ես,
Իմ պանդուխտ ախպեր,
Ես քեզնով ծարավ եմ,
Արի ինձ ջուր բեր։

ՊԱՆԴՈՒԽՏ ՈՐԴՈՒՍ

Օտար երկնքի տակ, իմ պանդուխ՛տ որդի,
Հերիք մաշես կյանքդ, դարձի, տուն արի,
Մայրդ կորցրել է քունն ու դադարը,
Աչքերը միշտ թաց են, սրբելու արի։

Պապդ չդիմացավ, կարոտդ տարավ,
Տատդ, թոռնի՛կ, թոռնի՛կ, կանչելով մարավ,
Էլ մի մնա, արի՛, կարոտս առնեմ,
Կարոտի զով ջուր տուր քո հորը ծարավ։

Մեզ թողել ես, շատ հեռու ես գնացել,
Տասը տարի օտար հողում մնացել,
Առանց քեզ մեր հացը լեղի է դարձել,
Մեր հույս, մեր ապավեն, որդի՛ ջան, արի։

ԱՍՏՎԱԾ ՉՈՒՆԻ ՉՔԱՎՈՐԸ

Չքավորին ինչ թագավոր,
Անօրեն է չքավորը,
Քանի որ հող ու փող չունի,
Աստված չունի չքավորը։

Չքավորին ի՞նչ ժամ, ի՞նչ պաս,
Երբ որ չունի թանով սպաս,
Ինչի՞ն է պետք աչն ու խաչը,
Երբ ձեռքով չի բռնում մաճը։

Հոգսերը ծով, կարիքը շատ,
Հացի կտոր չունի մի մատ,
Աչքերն առած արյուն ու մահ,
Դատաստանից չունի նա ահ։

Թիֆիլուս պես թափառում է,
Հաց է փնտրում չքավորը,
Երբ է նրա հալին նայել
Հարուստների թագավորը։

Ի՞ՆՉ ԱՆԵՄ

Թողել եմ օջախս, թողել եմ հողս,
Անտուն գաղթական եմ, վերջացավ փողս,
Ունեցվածքս արավ ոսոխը՝ թալան,
Թափառական, որբ, անտեր եմ, ի՞նչ անեմ։

Գիշերն իմ աչքերին երբեք քուն չի գա,
Կինս սովից մեռավ, էլ ետ տուն չի գա,

Որդիներս մշակ, ինձնից շատ հեռու,
Անտեր նահատակ եմ դառնում, ի՞նչ անեմ։

Սազս վաճառեցի մի հացի համար,
Ցավերս բազմացան, դարձան անհամար,
Ինձնից խռովել են գարուն, թե ամառ,
Աշուն, ձմեռ ու ձյուն եկավ, ի՞նչ անեմ։

Խեղճ Թիֆիլի՛ս, էլ ապրելու հույս չկա,
Տունդ ավեր, այս քողտիկում լույս չկա,
Մութ անտառ է, այստեղ արտի բույս չկա,
Անհույս ու անտեր եմ մեռնում, ինչ անեմ։

(Գաղթի առաջին օրերին աշուղի ընտանիքը պատսպարվել էր Բակուրիանի անտառում շինած մի քողտիկում)։

ՄՇԵՑԻ ԱԽՊԵՐ

Մշեցի՛ ախպեր, ա՜խ, վաթան երգիր,
Մնացել ես որբ ու առանց երկիր,
Թափառական ես, խեղճ ու տարագիր,
Մշեցի՛ ախպեր, վաթանդ երգիր։

Ծով դարդիդ համար քեզ հետ ես լացի,
Օջախիս դուռը լայնորեն բացի,
Մեր խոնջալի մոտ նստեցինք հացի,
Մշեցի՛ ախպեր, ախ վաթանդ երգիր։

Երգդ տխուր է, երգդ ողբագին,
Գովում ես հողդ, օրրանդ հին,
Այնտեղ ես թողել ծնողներ ու կին,
Մշեցի՛ ախպեր, ցավերդ երգիր։

Երգող մարդը միշտ թեթևանում է,
Երգը դարդերը կիսում, տանում է,
Հույսը լավ բան է, տես լուսանում է,
Եկ, Թիֆիլու հետ լուսաբաց երգիր։

Փ Ո Ղ

Քո ստեղծողն անիծվի,
Հարուստի զարդարանքն ես, փո՛ղ։
Անիրավության, դավերի,
Ցավերի ծուղակն ես, դու փո՛ղ։

Ում գրպանում շատ ես լինում,
Կատու է, առյուծ ես շինում,
Տիմարից գիտուն ես ծնում,
Ջարիքների չարիք դու, փող։

Ազնիվ մարդկանց մոտ չես գնում,
Պարկեշտից հեռու ես մնում,
Եղբայրը եղբոր դեմ սրում,
Տեղով անեծքի բուն ես, փո՛ղ։

Դու ես ծնում գող, ավազակ,
Գրպանահատ, անպիտք զավակ,
Ծովահեն՝ կողոպտող նավակ,
Ողբերգության աղբյուր ես, փո՛ղ։

Թիֆիլին քեզ միշտ ատել է,
Փողապաշտին նախատել է,
Սակը գրկած աշխատել է,
Հալալ է ապրել, հարա՛մ փող։

ՕՏԱՐ ՃԱՄՓԱՆԵՐ

Հե՜յ, օտա՜ր ճամփաներ, մոլորվել եմ ես,
Լեզու առեք, ասեք, դեպի ո՞ւր գնամ,
Մի որբ գաղթական եմ՝ զարկված ու զրկված,
Անտեր, անօգնական, ասե՛ք ո՞ւր գնամ։

Առաջին անգամն եմ կոխում ձեր հողը,
Օտարիս օգնեցեք, բարին կամեցեք,
Տուն ու տեղից զրկեց ինձ չար ոսոխը,
Գոնե դուք, ճամփանե՛ր, բարեկամացեք։

Եկան հեղեղեցին մեր գյուղերը շեն,
Ավերեցին, տարան, տիրացան հողին,
Ջարդեցին իմ ազնիվ խալխին լուսեղեն,
Օգնեցեք, ճամփանե՛ր, ասեք՝ ո՞ւր գնամ։

Վիշտս պատմեմ չեք դիմանա իմ ցավին,
Աշխարհով մեկ թափառում է ազգս հին,
Անտերունչ ողբում են ծեր, մանուկ ու կին,
Ինձ ուղեցույց դառեք, բարի՛ ճամփաներ։

Դժբախտ աստղի տակ է ծնվել իմ հայը,
Վզին փաթաթվել է կարիքն ու մահը,
Երգիչ Թիֆիլուս էլ պատել է ահը,
Ինձ տանող ճամփանե՛ր, ասե՛ք ո՞ւր գնամ։

ՎԵՐ ԿԱՑ

Նիրհելու ժամանակը չէ,
Քնել չի կարելի, վեր կաց,
Վառ երազներդ վերջացրու,
Քնել չի կարելի, վեր կաց։

Թուրքի գյուլլեն ալ ու կրակ,
Մեր գլխի վերևեն գնաց,
Ջալպ են տալիս, կոտորում են,
Քնել պետք չէ, շուտով վեր կաց։

Ջար Սուլթանը արնածարավ,
Ողջ հայերին է կոտորում,
Դու էլ հայ ես, աչքդ լավ բաց,
Քնել պետք չէ, շուտով վեր կաց։

Դու էլ, աշու՛ղ, սազդ նետիր,
Երգել չի կարելի, վեր կաց,
Թիֆիլի՛, ողջ ազգդ է կորչում,
Մի՞ ճար, հնար գտիր, վեր կաց։

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Բաթումում տնից զուրկ մուրացկան էի,
Թումանյանի գալն իմացա, գնացի,
Վիշտս ավելացավ՝ ցավը լսելով,
Ժողովրդիս ողբն իմացա ու լացի։

Հույսով ասավ՝ մի լռեցնի քո սազը,
Մեկ ապատություն է բերել էս դարը,
Պիտի ցնծա հայոց դաշտն ու սարը,
Պիտի ծաղկի չոր անպատն ու քարը։

Նա ինձ սփոփում էր, բայց ինքն էր տկար,
Վախենում շատ գործեր թողնի կիսկատար,
Արտասվում էր սիրած կինը անդադար,
Էլի բախտ էր՝ տեսա վարպետին հանճար։

Հիշեցի ողբալի Անուշը, Մարոն,
Խղճալի Գիքորը, սիրահար Սարոն,
Արյուն է հեղվում Կարինից-Տարոն,
Մեզ չգթաց բնավ Եվրոպան պարոն։

Հանճարեղն հիվանդ էր, վշտով հեռացա,
Նրա ցավն հիշելով, իմը մոռացա,
Այս դարդերի ծովում լալով կուրացա,
Թիֆիլիս խաչ, հավատ թողի ուրացա։

ՍԻԱՅՈՒՆ

(Հիշատակ)

Բազում երգերի, հեքիաթի վարպետ,
Ջավախքի արև, աշո՛ւղ Սիայի,
Ձես մեռել, դու կապրես միշտ առհավետ,
Ժողովուրդը փառքդ հոգում կպահի։

Բանավեճ է եղել, հաղթել ես շատին,
Երբեք չես խնայել տմարդին, վատին,
Ջարին, «օձ քաղաքի» դեմ արիր պատին,
Վնաս չեկավ սազիդ լարի մի հատին։

Թիֆիլին եմ՝ ամեն վայրկյան քեզ ծառա,
Լեզու առած ես քեզանից դաս առա,
Քո ջանքերով երգ ու սազի տեր դառա,
Դու իմ անմահ, վարպետ, անպարտ Սիայի։

ՋԻՎԱՆԻՆ

Երգիչների երգիչ, ազնի՛վ Ջիվանի,
Ջավախքի պարծանքն ես, Ջավախքի զարդը։
Բնավ չի թառամի, անմեռ կմնա,
Քո ցանած ծաղիկը, քո տնկած վարդը։

Երգերդ խրատող, բառերդ ոսկի,
Հայի սրտից կուգան տաղերդ բոլոր,
Լսողը խելքիդ, շնորհքիդ դասից
Կթողնի ետ կգա իր ճամփից մոլոր։

Դու ազնվացնում ես ծոմված հոգին,
Ցույց ես տալիս արդար ճամփեն լուսավոր,
Ջարդում, հերքում ես հնոց ադաթները սին,
Քո խրատող խոսքով, երգով փառավոր։

Քո ծանոթ Թիֆիլին քեզ էլ ո՞նց գովի,
Ջունի քո քանքարը, չունի քո լեզուն,
Շիտակ հոգիդ թող ինձնից չխռովի,
Եթե ասեմ՝ նոր Սայաթ ես, իմաստուն։

ԱԲՈՎՅԱՆԻ ԽՆԴՐԱՆՔԸ

Ծարավ եմ գիտության, ով ազնի՛վ Պարրոտ,
Խնդրում եմ կատարես իղձս, փափագս,
Որպես քո զավակը ինձ Դորպատ տանես,
Խնդրում եմ կատարես իղձս, փափագս։
Մեզ հավերժ վկա է Արարատ սարը,
Նրա սուրբը պատկերը, սառույցն ու քարը,
Օգնի՛ր, որ միշտ հնչի հայոց քնարը,
Անկատար մի թողնի միտքս, մուրազս։

Դու էստոն ես, ես մի հայ եմ, պատանի,
Ազգս տառապում է սրից Սուլթանի,
Եղիր բարի, բռնիր ձեռքս, վեր հանի,
Անկատար մի թողնի միտքս, մուրազս։

Տերտեր ու տիրացու, անգետ ու անբան՝
Կորստի են մատնել երկիրն հայկական,
Խավարամոլները դեմ են գիտության,
Անկատար մի թողնի իղձս, փափագս։

Թիֆլիսն եմ, այս երգը հորինեցի,
Աբովյանի ջերմ փափագը գրեցի,
Ես էլ սազս իմ ազգին նվիրեցի,
Կիսկատար մի թողնի իղձս, փափագս։

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ

Նեղվում է ազգդ չարաչար,
Արի՛, զորավա՛ր, որտե՞ղ ես,
Պարսից գնդերը հալածող,
Մեր քա՛ջ բարերար, որտե՞ղ ես։

Մեր տունն ավերակ է դառել,
Ազգդ չար Սուլթանին գերի,
Դու վեհ հերոս Ավարայրի,
Կսպասենք, արի՛, որտե՞ղ ես։

Դադարեց մեր երգն ու տաղը,
Ավերվեց շենացած թաղը,
Գուցե մեզ էլ մորթեն վաղը,
Փրկություն, արի՛, որտե՞ղ ես։

Վանքին, ժամին աղոթելով,
Սովի չափ արցունք թափելով,
Ձուր հույսերով մեզ խաբելով,
Կսպասենք, արի՝, որտե՞ղ ես.

Սազիս լարն եմ հնչեցնում զուր,
Թիֆիլուն ո՞վ կտա կեռ թուր,
Քաջ զորավա՜ր, փրկութիւն տուր,
Կանչում ենք, արի՛, որտե՞ղ ես։

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ

Ես քեզ այցի եկա մի օր,
Շիրակի շեն, Գյումրի՛ քաղաք,
Իմ Ջավախքի ախպեր ու սեր,
Հարազատ ընկեր ես, քաղա՜ք։

Սիրեցի քո բարքն ու լեզուն,
Ինչպես իմ հարազատ,
Երգեցի քո հանդեսներում,
Ձգալով մեր տան պես ազատ։

Շիրինի ջրից խմեցի,
Արագածն էր սիրելի շատ,
Ջիվանուն էլ հանդիպեցի՝
Լրացրի խոսքս կիսատ։

Ես քեզ տեսա, շատ հիացա,
Շիրակի շեն, Գյումրի՛ քաղաք,
Իմ Ջավախքի ախպեր ու սեր,
Թիֆիլուն սիրելի քաղաք։

ՀԱՎԱՍԻՆ ՍԱՂ Է ՆՎԻՐՈՒՄ ԻՐ ՎԱՐՊԵՏ ԹԻՖԻԼՈՒՆ

Հավասի

Սաղ եմ բերել, վարպետ, խնդրեմ ընդունես,
Թե ավել, թե պակաս, Հավասուդ ներես,
Ինչ ցանկաս, նոր սազով միշտ գլուխ բերես,
Իմ անգին ուսուցիչ, ազնի՛վ Թիֆիլի։

Տարիներով քեզ հնազանդ մնացի,
Քո շնորհիվ միտքս, աչքերս բացի,
Ջանը չխնայելով հասցրիր հացի,
Հայրական հոգու տեր, անգի՛ն Թիֆիլի։

Թիֆիլի

Դասերդ ավարտել՝ վարպետ ես դառել,
Քո վարպետին նվեր նոր սազ ես առել,
Ում հետ էլ մրցել ես՝ հաղթանակ տարել,
Քեզ բարի ճամփա, իմ լավ Հավասի։

Այսօր բաժանվում ես, երգիչ ես արդեն,
Բայց երբ է սոխակը գատվել իր վարդեն,
Գիշերը չեմ քնել՝ իմ սրտի դարդեն,
Քեզ բարի ճամփա, իմ լա՛վ Հավասի։

Հավասի

Ի՞նչ բառեր որոնեմ, ի՞նչ գույներ գտնեմ,
Որ լավերից լավը քեզ համար ընտրեմ,
Թե սխալմունք ունեմ, թողություն խնդրեմ,
Միշտ բարու մեջ մնաս, բարի՛ Թիֆիլի։

Սապս ուսած կանցնեմ քո ճանապարհով,
Տուր քո ճարտար ձեռքը և մնա՛ս բարով,

Եթե սրտիս շուշեն չչարդեն քարով,
Քեզ միշտ պարտական է քո սան Հավասին։

Թիֆիլի

Գնա, լավ ծառայիր քո ժողովրդին,
Բարև առ, բարև տուր հային, թե թուրքին,
Բարձր պահիր աշուղական բարքը հին,
Ճամփիդ՝ վարդ ու մեխակ, երգիչ Հավասի։

Սիրով ընդունում եմ քո նվեր սաղը,
Հալալ իմ ջանքերը, իմ տված դասը,
Չպակասի էդ քո գլխի մի մազը,
Ճամփիդ՝ շուշան, սիմբիլ, գուսան Հավասի։

Հավասի

Ներողամիտ եղիր քո սանին նորից,
Գոհացա ձեղանից ու ձեր շնորհից,
Դժվար է բաժանվել իմ Հիսնի մորից,
Միշտ շնորհապարտ եմ ես քեզ, Թիֆիլի։

Թիֆիլի

Շնորհքով մարդ ես, կաճես, Հավասի՛,
Քեզ աշուղ համարիր հասարակ դասի,
Թե նեղվեմ, Թիֆիլուդ օգնության հասի,
Ուժդ ժողովրդից միշտ առ ու գնա։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դիմիկ Բազրատունի.—
Աշուղ Թիֆիլու գրական ժառանգությունը . . 3
Աշուղ 9
Ծնվա 9
Ինքս ինձ 10
Իմ սազը 11
Հազար մազից հաց եմ կերել 12
Երազ 13
Ջավախք 13
Ով փերի 14
Խնամի, օջախդ շեն է 15
Յար քեզնից վերք առա 16
Աղբյուրից ջուր տանող աղջիկ 17
Ճամփին տեսա 17
Հրաշքի պես հայտնվեցավ 18
Պարտեզ մտա 19
Յարս մոտես անցավ 19
Հանդես է բացվում 20
Պարերգ 21
Հիանի 22
Էս գիշեր 22
Կնքամայրը 23
Յար անուշիկ 24
Սիրո խոստովանություն 24
Գեղեցիկ է շողն արևի 25
Գաղտնիք չունեմ 26
Հարսանիքից 26
Դուք մնաք բարով 27
Թող ես կարոտով մնամ 28
Կարոտել եմ 28

Յայլի սարեն կուգար 29
Մեր զուլալ աղբյուրի ջուրը 30
Գովք սիրուհուս 30
Երանի երազիս գայիր 31
Արաքսյային 32
Մի խառնի 32
Թամադա 33
Դարն անցավ 34
Ավետիս երգելով անցան 35
Տրտունջ 35
Մնողական խրատ 36
Սուլդայի ողբը 37
Ամա՜ն, ոուսնե՛ր, մի՛ք գնա 38
1914 թվին 39
Արդյոք ո՞վ է, խեղճ գյուղացի, քո տերը . . 40
Նորից ձյունը հալվեց 40
Պանգուխտ որդուս 41
Աստված չունի չքավորը 42
Ի՞նչ անեմ 42
Մշեցի ախպեր 43
Փ ո ղ 44
Օտար ճամփաներ 45
Վեր կաց 45
Հովհ. Թումանյանին 46
Սիալուն 47
Ջիվանուն 48
Արովյանի խնդրանքը 48
Վարդան Մամիկոնյանին 49
Գյումրի քաղաք 50
Հավասին սազ է նվիրում իր վարպետ
Թիֆիլուն 51

ԱՇՈՒՂ ԹԻՖԻԼԻ

... ԵՐԳԵՐ

Խմբագիր՝ Հ. Զորանյան,
Նկարիչ՝ Լ. Վարդանյան,
Գեղ. խմբագիր՝ Ա. Թողրիա
Տեխնիկական խմբագիր՝ Է. Աղսախալյան,
Սրբագրիչ՝ Ա. Բոստանջյան

ԻԲ 1981

Հանձնված է շարվածքի 22.01 1982 թ.
Ստորագրված է տպագրության 8.02. 1982 թ.
Ուլ. 01752, ֆորմատ 70Х90 1/32 թուղթ № 1
Տառատեսակ՝ գրական։ Տպագրությունը՝ բարձր։
Պայմ տպագրական մամուլ 2,048։ Հաշվ. հրատ.
մամուլ 1,95։ Տիրաժ 2000 օրինակ։ Պատվեր 78։

Գինը՝ 25 կոպ.

«Մերանիա» հրատարակչություն, 380008
Թբիլիսի, Ռուսթավելու պողոտա 42։
Վրացական ՍՍՀ հրատարակչությունների,
պոլիգրաֆիայի և գրքերի առևտրի գործերի
պետական կոմիտեի Ախալքալաքի տպարան,
Մախարաձեի փող. 38

აშუღ თიფილი

სიმღერები

(სომხურ ენაზე)

გამომცემლობა „მერანი“, 380008
თბილისი, რუსთაველის გამზ. 42
საქართველოს სსრ გამსახკომის
ახალქალაქის სტამბა, მახარაძის ქ. № 38

АШУГ ТИФИЛИ

ПЕСНИ

(На армянском языке)

Издательство «Мерани», 380008
Тбилиси, проспект Руставели 42
Ахалкалакская типография
Госкомитета Грузинской ССР
по делам издательств,
полиграфии и книжной торговли,
Ахалкалаки, ул. Махарадзе 38